Բ.

ԵՐԳԵՐ

ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐԳԵՐ

ԹԱԳԻՈՐԻ ԳՈՎՔ*)

Վանայ բարբառով

Էգ բարև, էգ բարև 1)
Էգն արևուն տէր բարև.
Էգ բարև, էգ բարև։
Աստուածածնայ տոնք բարև.
Թագաւորին շատ բարև։
Էգ բարև, էգ բարև,
Մարգարէից տանք բարև.
Թագաւորին շատ արև.
(Ճգնաւորաց, մարտիրոսաց ևն).
Արև նոր Թագաւոր,
Թագուհիդ շնորհաւոր։
Թագաւոր, ինչ պիրեմ քեզ նման.

*) Անհասարակ հարսանեաց մէջ ամեն պարի երգեր կերգուին. այս գլխուն մէջ առնուածը միայն թագւորի ու հարսի «գովք» են։

1) Արտամէդ հարսանեաց երկրորդ առաւօտ կերգեն սոյն երգը։

Քեռ կանանչ արև՝ դու նման.
Ձերմակ վարդ որ կը բացուէր.
Բացուէր քեռ արև, դու նման։
Թագուհի, ինչ պիրեմ քեզ նման՝
Քեռ կանանչ արև՝ դու նման.
Կարմիր վարդ որ կը բացուէր.
Բացուէր քեռ արև, դու նման,
Աղպիներ, ինչ պիրեմ ձեզ նման.
Ձեր եօթնի արև՝ դու նման,
Եօթը դոյն վարդ որ կը բացուէր,
Բացուէր ձեր արև, դու նման։

Նարեկացայ Նանկացց գիւղի բարբառով.

Թագուոր, ինչ պիրեմ քեզ նման,
Քեռ կանանչ արևն ի նման.
Նարեկացու դէմ կայներես,
Նարեկացին պահի քեզ պարզ իրես.
Բարով գքու թագն վէյելես։
Հայ սուռ. վայ սուռ,
Թագուոր, ինչ պիրեմ քեզ նման,
Քեռ կանանչ արևն ի նման։
Սուրբ Յակոբու դէմ կայներես,
Սուրբ Յակոբ պահի քեզ պարզ իրես.
Բարով գքու թագն վէյելես։
Հայ սուռ, վայ սուրռ, ...
Թագուոր, ինչ պիրեմ քեզ նման,
Քեռ կանանչ արևն ի նման.
Էջմիածին պահի քեզ պարզ իրես.
Բարով գքու թագն վէյելես։
Հայ սուռ, ...
Անթառան ծաղիկն օր կը պացուէր,
Ծաղիկ քու արևու նման էր։
Հայ սուռ, ...
Բալասան ծաղիկն օր կը պացուէր
Ծաղիկ քու արևու նման էր։
Հայ սուռ, վայ սուռ ալն ....
Թագաւոր ինչ պիրեմ քեզ նման
Քեռ կանանչ արևն ի նման։

Թագուորի մէր կայնած պիտէր
Մաղով չամիչ առնէր ի դէր։

*
* *

Մոկաց բարբառով.

Էք արև, էք արևու տանք բարև,
Հարս ու փեսին շատ արև.
—Էսա թագուոր վիր թագ նմանի,
Պալասան ծաղիկ որ կը ծաղկէր՝
Կուրխանաս ծաղիկ նման ի։
Էսա թաուոր թագ նման ի,
Ջուխտ Վարագայ թագ նման ի
Սարի լալեն որ կը բացուեր,
Բացուաւ, քօ կանանչ արևի նման ի։
Էսա թագուորի թագ նման ի,
Սուրբ խոդևանից թագ նման ի։
Էսա թագուոր թագ նման ի,
Բարդղոմոսա թագ նման ի։
Թագուորն էր խալ, խալ,
Սոլերն էր կարմիր, արևդ կանաչ.
Թագուոր, ինչ պիրեմ քե նման,
Սարի սրբ Գէորգու թագն ի նման,
Քո կանաչ արևն ի նման։

* *
*

Մոկաց Սեպ գիւղի բարբառով *.

Ցա ինչ թագ էր, թագ նման էր.
Թագիկ դիւ շուռ գէր,
Շուռ ու մուռ գէր,
Կանաչ կարմրով էսա տուն գէր,
Էս ինչ թագ էր, թագ նման էր.
Թագիկ դիւ շուռ գէր,
Շուռ ու մուռ գէր,
Բարով էսա տուն գէր,
Սըպ Կարապետու օխնէք առնէր.
Նարեկացու օխնէք առնէր,
Սըպ Գէորքու օխնէք առնէր,
Աղթամարայ Սըպ խէչու օխնէք առնէր,
Լիմ անապատու օխնէք վերէն էլնէր։

Կիւսենեց գիւղի բարբառով *).

Էգ բարև, բարև հա էգ բարև,
Թագաւորու չատ արև.
Սարի յալէն, որ կը բացուի.
Բացուի քեօ արև քեօ նման։

Թագուոր ինչ պիտի քե նման,
Քիւ կանաչ արև քե նման.
Սարի յալէն, որ կը բացուի,
Բացուի քեօ արև դու նման։

*
* *

Ալաշկերտի թագւորի գովքը 1).

Թագւոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանանչ տերևով.
Սուրբ Էջմիածին զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զօրութենով։
Թագւոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանանչ թևերով.
Սուրբ Էջմիածին զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զօրութենով։
Թագւոր, բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանանչ տերևով.
Սուրբ Վարդիհեր զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զօրութենով։
Թագւոր, բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանանչ տերևով.
Սուրբ Կարապետ զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զօրութենով։
Թագւոր, բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանանչ թևերով.
Սուրբ Սուքիասանք զարեդ օրհնէ,
Մէկ Աստուծու զօրութենով։

Եղանակը փոխուած եւ ծանր

Թագւոր, ինչ բերեմ քե նման,
Քու կանանչ արև քե նման.
Էն աղօթրան օր կը բացուէր,
Բացուէր արևիդ ի նման։
Թագւոր, ինչ բերեմ քե նման,
Քու կանանչ արև քե նման.
Էն Քեաֆուր վարդն օր կը բա-
ցուէր,
Բացուէր արևիդ ի նման։
Թագուոր, ինչ բերեմ քե նման.
Քու կանանչ արև քե նման.
Էն Նունուֆարն օր կը բացուէր,
Բացուէր արևիդի նման 2)։

Փոխուած եղանակով.

Գացէք, կանչէք, թագուորա հէր,—
Ցիգայ նստի դարբաս էնայ.
Ջնգլիկ (ծնտրիկ) զարկայ սուրբ
սեղանին,
Խերն ու բարին մեր թագուորին։
Գացէք, կանչէք, թագուորամէր,
Ցիգայ նստի դարբաս էնայ.
Ծնտրիկ զարկայ սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագուորին։
Գացէք, կանչէք, թագուորաղբէր,
Ցիգայ նստի դարբաս էնայ,
Ջնգլիկ զարկայ սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագուորին։

*) Երգած է Խօսրօ Սարգսեան։

1) Շատ ծանր եւ քաղցր կերգեն Ազապ չարիք. իւրաքանչիւր տող կը կրկնեն։ Երրորդ տողի վրայ ձայներնին կը բարձրացնեն. տները վերջանալուն՝ միասին կառեն.—«Աստուած շնորհաւոր էնայ»։ Ազապ կը կրկնեն.—«Մէկ լէ յեվելի»։

2) Իւրաքանչիւր գովք եօթը տնից բաղկացած պիտի լինի։

Միջակ—արագ եղանակով,

Թագուոր թագն ի գլօխ թագն ի գլօխ.
Առ ժուռ ու մուռ տի.
Սուրբ Սուքեասանք Ալաշկերտցի,
Զուր մուրացն տի (տայ)։
Թագուոր թագն ի գլօխ թագն ի գլօխ,
Առ ժուռ ու մուռ տի.
Սուրբ Էջմիածին Երևնցի,
Զուր մուրացն տի։
Թագուոր թագն ի գլօխ թագն ի գլօխ,
Առ ժուռ ու մուռ տի.
Սուրբ Վարդիհեր կաղզուընցի,
Զուր մուրացն տի։

Թեթեւ (արագ) եղանակով.

Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ինչենի պիտէր ծաղկունաց,
Օր կը ճթռէր՝ ճութն ու տերև խըտ իրաց,
Զէն քաղէք, բերէք թագուորին պարունաց։
Մեր թագուորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,
Ծաղիկն էլ ինչենի պիտէր ծաղկունաց.
Ծաղիկն էլ պալասօճ պիտէր ծաղկունաց,
Զէն քաղէք, բերէք թագուորին պարունաց 1)։

Տարբեր եղանակով.

Մեր թագուորն էր խաչ, խաչ կոթ, խաչ ու մաչ,
Բիճիշն էր կարմիր, արևն էր կանանչ։
Մեր թագուորն էր խաչ, խաչ կոթ, խաչ ու մաչ,
Պսակն էր կարմիր, արևը կանանչ։
Մեր թագուորն էր խաչ, խաչ կոթ, խաչ ու մաչ,
Խնձորն էր կարմիր, արևն էր կանանչ։

Շատ արագ եղանակով.

—Բէտ դիզան, բէտ բէտ դիզան, տեսէք էն ոբն ա 2).
—Բէտ դիզան, բէտ բէտ դիզան, էն գեղի ռէսն ա։
Խարխուներ խրխռալին՝ տեսէք էն ոբն ա.
Խարխուներ խրխռալին վարդապետներն ա.

1) Երգերու մէջ միայն երրորդ տողը կը փոխուի շատ մը ծաղիկներ յիշելով։
2) Ամեն տողի սկիզբը պիտի կրկնուի «բէտ դիզան» ելեն։

Կագւներ գվգվալին՝ տեսէք էն ո՞րն ա.
Կագւներ գվգվալին գեղի հարսներն ա։
Ճնճղներ ճլվլալին տեսէք էն ո՞րն ա.
Ճնճղներ ճլվլալին գեղի աղջիկներն ա։
Շուն էկաւ պարկն ի բերան, տեսնք էն ո՞րն ա,
Շուն էկաւ պարկն ի բերան, գեղի գզիրն ա էլն։

*
* *

Ե՛կ բարև, եկ բարև,
Թագւորին շատ արև։
Թագւորի մէր, դուս արի,
Դոու դռան դէմ արի.
Քե ինչ ու ինչ եմ բերե,
Քե տախտ աւլող եմ բերե.
Քե կար կարող եմ բերե.
Քե գլօխ դմրող եմ բերե.
Քե թունտիր վառող եմ բերե.
Քե ծամ փետող եմ բերե.
Քե կուժ կոտրող եմ բերե.
Քե ճաշ էփող եմ բերե.
Քե հէր մէր Fովող եմ բերե.
Ե՛կ բարև, հա եկ բարև.

Մեր Թագւորին շատ արև։

*
* *

Թագւոր, ի՞նչ բերեմ քե նման,
Քու կանանչ արև, դու նման.
Ճերմակ վարդն օր կը բացուէր,
Բացուէր քո արև, դու նման։
Թագուհի, ի՞նչ բերեմ քե նման,
Քու կանանչ արև դու նման.
Կարմիր վարդն օր կը բացուէր,
Բացուէր քու արև, դու նման։
Ազպներ, ի՞նչ բերեմ ձե նման,
Ձեր եօթնի արև, դուք նման.
Եօթ գուն վարդն օր կը բացուէր,
Բացուէր ձեր արև, դուք նման։

ՀԱՐՍԻ ԳՈՎՔ

(Ծաղկոց)

Կարճկանայ Նանըկանց գիւղի բարբառով.

Մէրի՛կ, դիւ մի լար, լալելիւ ես եմ *).
Քիւրի՛կ, դիւ մի լար, լալէլիւն ես եմ.
Կոյի՛կ, դիւ մէրթար, էրթալիւն ես եմ.
Զրի՛կ, մի՛ խչար, խըչալիւն ես եմ.
Շէմիկ մի՛ դնդար, դնդալիւն ես եմ։

Առաւօտման ժամ ձէնեցին 1),
Քեանեղ ձիանք դիւս քեաշեցին,
Ձիմ աղջիկ վերէն խէծուցին։
Առաւօտման ճրագն էր վառ,

*) Հարսը հօր տանից դուրս հանելու ժամանակ ընկերուհիները կերգեն հարսի կողմէն:

1) Ընկերուհիները մօր կողմէն կերգեն:

Դու կը մանէր զօզանի գառ։
Առաւօտման ժամ ձէնեցին,
Կանաչ մօմեր օր կպուցին,
Իմ Նազլիկ դիւս քեաշէցին.
Մէրիկ խափըցին մէկ լաճով,
Աղբէր խափըցին Սղերտու ապով
Խէրիկ խափըցին ամակաշաղի ծաղ-
կով։

* *
*

Մոկաց Սեպ գիւղի բարբառով.

Խօրս, արէ վեր քիւ թախտէն,
Գեանգատ մաներ քիւ բախտէն.
Խարս արէ վեր, ճազ մ՛ աներ.
Ջիւպէն տուր վեր, թօզ մաներ.
Զեր կանճ կտրէր, ու տտաց քիւ-
րէն
Խալխալ թափեր պտիկ խարսին,
Զեր կանճ կտրէր տտաց քեարին
Մատնիք չինէր պտիկ խարսին։
Խօրս, արե վեր քեօ թախտէն,
Գեանկատ մ՛ աներ քեօ բախտէն.
Խօրս, քեօ շիւշէն կը զնգնգայ,
Ես քեօ սիրուն խիւանդ ընկայ.
Խարս, արե վեր, ճազ մ՛ աներ,
Ջիւպէն տուր վեր թօզ մ՛ աներ։

*
* *

Շիրակայ Դաօլիջայ գիւղի բարբառով.

Ջէմիկ, մի դնայ, դնդալու ես եմ
Նարիպ խուրպաթ կորելու ես եմ,
Աղջի մի լայ, լալէլու ես եմ,
Նարիպ խուրպաթ կորելու ես եմ.
Հարմնած էկաւ վէրին կալերով,
Նինեն բէրին թղթի ծալերով.
Աղբէր չունիմ, ձիու դիզկին խաղցնայ
Տանի ճամբէն բարով դառձնայ։

* *
*

Ալաշկերտի բարբառով *).

Ղուսնակ, մի ցոլա, ցոլալու ես իմ.
Մերիկ, դու մի լայ. լալելու ես իմ.
Աղբէր, մի բաժուի, բաժուելու ես իմ,
Շէմքիկ, մի դնայ. դնալու ես իմ.
Դռնիկ, մի ժաժա, ժաժալու ես իմ։

---

*) Հարսնացուի ծամերն քսան եւ չորսի կը բաժանեն. ամեն մի ծամ հիւսելու միջոցին մի երգ պիտի ասեն հաւաքուած աղջիկներէն իւրաքանչիւրը, երբ քսան եւ չորս ծամերը հիւսուեցան, կսկսեն պարերգեր եւ պարեր: Առաջին երգը կասէ աղջիկներու **Ազատ բաշին**: Երկրորդ ծամի հիւսը Քրդերէն երգով կսկսեն եւ այսպէս փոխն ի փոխ հայերէն եւ Քրդերէն կերգեն:

Փ՛յ օ՛յ լըմըն խարիպօ.
Խարիպըմ, խարիպէ խօսէօ.
Դարեա մալա բավէ բուֆէ ֆօրքա.
Բուֆէ մազըրի զաւա խօրքա։
(Աւա՜ղ հէգ պանդխտիս,
Պանդուխտ եմ, պանդուխտ Աստուծոյ.
Հարսի հօրը դուռը խիստ փոս է.
Հա՛րս, տուն մի՛ լայ, փեսան երիտասարդ է)։

*
* *

Գնուռ ու դըրկեց, մացէք բարով,
Կերթամ կը մնամ տարով.
Իմ հէր խաբած կթխէմ՝ գինով,
Իմ մէր խաբած քօփ մի չիլով։
Ձըմ էրթայ մէրիկ, չըմ էրթայ,
Էկած ա զօռով կը տանին։
Պազրկեան էկաւ լցուաւ էդ գեամին,
Մէրիկ մեռնէր քու խարիպ ջանին.
Էկած՝ ջոկած կը տանին,
Վոյ լըմըն խարիպօ,
Խարիպէ խօսէ մէ,
Բէկար բուֆէ սըպէմըն։
Գիշերուայ ժամեր ձէնեցին,
Ախճիկ մամուց ջոկեցին.
Դուն ճալալ մէրիկ, դուն ճալալ,
Տարան Թըխ տանին.
Տարան Ջատկին լէ կը բէրին։
Հարսի պապու քաւլէն էր սալերով.
Բոզ ձին կապած էր նալերով.
Ախճիկ տարած էն կալերով։
Մը՛ թափի ծառնուկ, մը՛ թափի,—
Թափելու ես իմ.
Մը՛ թափի թփուկ, մը՛ թափի,
Թափելու ես իմ։
Հարսնածդ էկաւ վերի կալերով,
Հինէն բերին քղի, թղթի ծալերով.
Վոյ լըմըն խարիպօ եւն.։
Ախճկայ ձեռներ հինեցին,
Ախճիկ մամուց ջոկեցին.
Մի՛ լայ մէրիկ, մի՛ լայ,

Լալելու ես իմ։
Դու հալալ մէրիկ, դու հալալ,
Ծծիդ կաթն ընծի հալալ։
Ախճիկ դուն խօրոտ, քու ախպէր զանկին,
Դլօխտի կապեր ես, կարմիր գուլբանկին.
Խօյամ էլ կեղնիմ յէրսիդ բռանկին։
Աչքերդ ի թուխ ու քրնց լօղակ,
Կամա զԱգրակն ու Կօղակ։
Ցէրիկուարէ ճրագն էր մառ,
Դու կմնէր զօզանի դառ։

*
* *

Շիրակայ Ղումզլու գիւղի բարբառով *)

Աղլամա մարիկ, աղլամա—Մի լար մայրէկ, մի լար.
Ուստակյին, բաշի բաղլամա—Վարպետ կին դլուխ մի կապեր.
Շէն անա, շէն բաբա—Առատասիրտ հայր, մայր
Ըավրն շէն օլսուն,—Տներնիդ չէն լինի,
Ման գեդարամ—Ահա ես կերթամ
Երըն գէն օլսուն։—Տեղերնիդ լայն լինի։

Ընկել ա իրիկուայ հովը,
Բազրկեան իջել ա ծովը։
Շէն անա շէն բաբա
Տունըդ չէն էղնի,
Ես կերթամ, տեղըդ լէն էղնի։
Ընկել էր իրիկուայ քամին,
Բազրկեան իջել էր գեամին։
Շէն անա շէն բաբա
Ըավրն շէն օլսուն,
Իրան յեօլի գեալ երն գէն օլսուն։
Ջարչին ա ծախում քեաքան,
Աղջկան չկայ վաքան,
Շէն անա շէն բաբա տունդ շէն էղնի։
Աղջի՛ էն օրը մեռնէր,
Օր կը տանէին աւաղան,

Շէն անա էլն։
Հարսնառն էկաւ վերին կալերով,
Հինէն բերին թղթի ծալերով։
Աղջի՛կ, մի լայ, լալելու ես իմ,
Ղարիպ դուրպաթ կորելու ես իմ։
Ծառեր մի թափիք, թափելու ես իմ,
Ղարիպ դուրպաթ կորելու ես իմ։
Իրիկուայ զանկեր զարկեցին,
Աղջկան հօրից, մօրից ջոկեցին։
Գոգնոցս Ներկեր եմ Գեանջա տոռոնով,
Սիրտս լցեր եմ գունդ գունդ արունով։
Շէն անա էլն։
Մի՛ թալիր թերեր թափելու ես իմ,

---

*) Այս երգը երգում են պսակից մի օր առաջ հարսնացուին իւր ընկերուհիներով տանում են վարպես կնոջ տունը գլուխը լուանալու. «Ուստակինը» հարսի գլուխը լուանալուց յետոյ մազերը մանր-մանր հիւսում է. ընկերուհիները ամէն մի հիւսին մի տուն տխուր եղանակով երգում են, եւ հարսի հետ լաց լինում։

Ղարիպ օտար երկիր կորելուն ես եմ.
Շեն անա չեն բաբա, տունդ չէն էղնի,
Ես կերթամ, տեղդ լէն էղնի։

*
* *

Խիւանենց գիւղի բարբառով *)

Թարս վէր էլի.
Պաղէ, վեր էլի.
Ջատու ճամբախ ի.
Քեօ ձին թամբիւկ ի։
Քեօ աչիչ արցունք
Գեարնան լուլախ ի։
Աղբէր, դիւ մի բաժուիր,
Բաժնուելուն ես եմ,
Մէրիկ դիւ մի լար,
Լալելուն ես եմ.
Շէմիկ մի դնդայ,
Դնդալուն ես եմ,
Իմ աչիչ արցունք գեարնան լուլախ ի։

*
* *

Հարսը դռան առաջ.

Թագուորի մէր դիւս էրի, հէյ դիւս էրի 1)
Քե գլեօխ դմփող եմ պէրի,
Թագուորի մէր դիւս էրի, հէյ դիւս էրի՝
Քե տախտ ալող եմ պէրի.
Թագուորի մէր դիւս էրի, հէյ դիւս էրի,
Քե խարս դրող եմ պէրի։

*
* *

Ալաշկերտի Խումիպուծախ գիւղի բարբառով.

Թագուորի մէր դուս արի
Քե գեօլի խազ եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Լեզուն տաս գեազ եմ բերե,
Թագուորի մէր, դուս արի,
Քե ծամ պճկող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Տախտ աւելող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Խմոր շաղող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Գրտնակ քաշող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Գունտ էնող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Քուֆթայ ծէծող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Աման լուող եմ բերե.
Թագուորի մէր, դուս արի,
Թումպնի քթուող եմ բերե։

---

*) Առած է Եօռոմսխիմս Սարգսեան։
1) Հարսը եկեղեցուց տուն բերելիս, տան դռան առաջ կանգնած կերգեն։